ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2021/49

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
2 հունիսի 2021 թ. N 49

ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի Մանուշյան 4 թաղ.,30

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021թ.հունիսի 2-ին քննարկեց Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ՇՏՊՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	14 հուլիսի 2020
ինքնավերլուծության ներկայացում	23 հոկտեմբերի 2020
փորձագիտական այցի իրականացում	1-4 դեկտեմբերի 2020
փորձագիտական զեկույցի ներկայացում	1 փետրվարի 2021
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	12 փետրվարի 2021

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 5-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Առկա են որոշակի խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առկա են նաև առաջխաղացման միտումներ և օրինակներ**

ՄՈՒՀ-ը որոշ չափով ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհումը, թեև կան ակնհայտ խնդիրներ: ՇՏՊՔ-ն ուսումնական գործընթացն իրականացնում է պետական կրթական չափորոշիչներին /ՊԿՉ/ համապատասխան և, քանի որ իր համար չի մշակել ՄԿԾ-ներ (բացառությամբ «Զբոսաշրջություն» և «Գովազդ» մասնագիտությունների), քոլեջի մասնագիտությունները բովանդակային առումով համահունչ են հանրապետության մյուս քոլեջների մասնագիտություններին: Մինչդեռ ՄԿԾ-ների մշակումը կնպաստեր շրջանավարտի հավաքական նկարագրի ձևավորմանը և վերջնարդյունքահեն ուսուցման իրականացմանը: Վերջնարդյունքների հստակեցման անհրաժեշտություն կա: Արտերկրի նմանատիպ ծրագրերի հետ համեմատություն (բենչմարքինգ) չի իրականացվել:

Քոլեջում դասախոսները կիրառում են դասավանդման բազմաթիվ ինտերակտիվ մեթոդներ, որոնք հարստացվել են առցանց ուսուցման ընթացքում: Դրանց մի մասը բավական արդիական է և նպաստում է ուսանողակենտրոն միջավայրի ստեղծմանը:

Սակայն ՄԿԾ-ների և ուսուցման մեթոդների ընտրության արդյունավետության գնահատման համար հստակ մեխանիզմներ ՄՈՒՀ-ում ներդրված չեն:

Այնուամենայնիվ դրական է, որ ամփոփիչ ատեստավորման ընթացքում ուսանողները կարող են հանձնել քննություն կամ դիպլոմային աշխատանք ներկայացնել, հաճախ դրանք ղեկավարում են գործատուները:

ՇՏՊՔ-ի պրոֆեսորադասախոսական կազմը համալրված է պրֆեսիոնալ, պրակտիկ փորձառություն ունեցող կադրերով: Քոլեջում դասավանդում են նաև գործատուներ և համապատասխան

մասնագիտական ոլորտում պրակտիկ աշխատանքային փորձ ունեցողներ, շատ են երիտասարդ դասախոսները:
Թեև մշակվել է դասավանդողների մասնագիտական որակներին և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգ, սակայն այն դեռ չի գործում:
Առկա է մասնագիտությունների իրականացման համար բավարար ուսումնական միջավայր, չնայած այն հանգամանքին, որ ՇՏՊՔ ռեսուրսների նորացումը տեղի չի ունենում կայուն պարբերականությամբ: Միժամանակ պետք է նշել, որ բյուջեից քոլեջին հատկացվող գումարների նվազեցման պայմաններում, քոլեջը մասնագիտությունների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկան բազայի պակասը լրացնում է դրամաշնորհային ծրագրերով: Գործատուները, հատկապես Դուալ կրթության, պատրաստակամություն են դրսևորում իրենց ռեսուրսների համատեղ օգտագործման համար:
Քոլեջի կառավարման մարմինները ջանքեր են գործադրում ռեսուրսային բազան, դասավանդման և ուսումնառության համակարգերը բարելավելու համար:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Տարբեր փաստաթղթերում առաքելությունը տարբեր կերպ է շարադրված և առկա չէ որևէ փաստաթուղթ, որը կհիմնավորի փոփոխության անհրաժեշտությունը:
Նախորդ ՌԾ-ներում չեն եղել նպատակների իրականացումը և դրանց արդյունավետությունը գնահատող ցուցիչներ, քոլեջը երբևէ չի արել ՌԾ կատարողականի գնահատում, ինչը ռիսկային է դարձրել քոլեջի որդեգրած առաքելության և նպատակների իրականացումը, սակայն 2021-2023 թթ. ՌԾ-ում քոլեջը սահմանել է վերջնարդյունքներ և դրանց ստուգման ցուցիչներ, մշակել է գործողությունների պլան, որը կարող է նպաստել ռազմավարական արդյունավետ կառավարմանը և նպատակների իրականացման պարբերաբար գնահատմանը:
Կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը հիմնականում փոխկապակցված չեն քոլեջի ՌԾ-ին: Կատարողականին ուղղված ներքին մշտադիտարկման և գնահատման համակարգի բացակայությունը հնարավորություն չի ընձեռում գնահատել երկարաժամկետ և միջնաժամկետ պլանների իրականացման արդյունավետությունը: Այդ նպատակին չի ծառայում նաև հաշվետվողականության մեխանիզմը:
Քոլեջի կառավարման բացթողումների մեծ մասը պայմանավորված է նրանով, որ քոլեջում որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է և կառավարման մեխանիզմների արդյունավետության գնահատման համակարգ առկա չէ: Չկան հստակ ընթացակարգեր, անհրաժեշտ մեխանիզմներ և գործիքներ, որոնք հնարավորություն կտան գործառնել ՈԱ ներդրվող համակարգին և ձևավորել որակի մշակույթը:
Քոլեջի ներքին և արտաքին շահակիցներն իրազեկված չեն որակի ապահովման գործընթացների մասին: Դեռ ներդրված չէ տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծման, տարածման համակարգված մոտեցումը: ՊԻԳԲ շրջափուլը դեռևս լիարժեք չի գործում:
ՇՏՊՔ-ն ջանքեր է գործադրում կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ. բոլոր կառավարման մարմիններն ունեն իրենց կանոնակարգերը, մշակվել է որակի ապահովման քաղաքականությունը: Քոլեջն ակտիվացրել է գործատուների հետ իր համագործակցությունը:

3.. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորումների արժանահավատ շնորհմանը.***

2016-2021թթ. ռազմավարական ծրագրում քոլեջի սահմանած նպատակները և խնդիրները շատ հավակնոտ էին և անհասանելի: 2021-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագրով քոլեջն իջեցրել է հետազոտության նշաձողը և շեշտադրումն ուղղել է ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը: Քոլեջում ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության փոխկապակցման տարրերը թույլ են, դրանք երևում են նաև որոշ դիպլոմային, կուրսային աշխատանքներում, երբեմն առանձին առարկաների հանձնարարականներում:

Քոլեջում միջազգայնացմանը և արտաքին կապերին նպաստող հստակ մեխանիզմներ, ընթացակարգեր և քաղաքականություն, ինչպես նաև միջազգայնացման հարցերով պատասխանատու կառույց չկա: Իրականացված ծրագրերը գործում են շնորհիվ անձնական կապերի, ուստի ռիսկային են, քանի որ հետագայում կարող են անձով պայմանավորված՝ ընդհատվել և խոչընդոտել կայունությանը:

ՇՏՊՔ-ն ունի ՏԻՄ-երի, տարածաշրջանի դպրոցների, ՋԼՄ-ների հետ կապեր, սակայն որպես տարածաշրջանային քոլեջ և գերազանցության կենտրոն չի համագործակցում մարզի այլ քոլեջների հետ:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման քոլեջի կողմից ներկայացված ծրագրում փորձագետների կողմից տրված խորհրդատվությունները կամ ճիշտ չեն ընկալվել կամ ինչ-ինչ պատճառներով ենթարկվել են բովանդակային փոփոխության: Արդյունքում Ծրագրով սահմանված ակնկալվող արդյունքների մեծ մասը չի համապատասխանում փորձագիտական խմբի կողմից սպասվող բարելավումներին: Միջանկյալ արդյունքները ձևակերպված են գործողությունների տեսքով և ոչ բոլորը կարող են նպաստել ակնկալվող արդյունքի ձեռքբերմանը: Սահմանված են գործողությունների իրականացման համար պատասխանատուներ: Արդյունքների ձեռքբերման համար ռեսուրսներ ոչ մի չափանիշում նախատեսված չեն: Բարելավման պլանի վերանայման կարիք կա:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.
   - **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
   - ՌԾ նպատակների և խնդիրների առաջընթացի գնահատման քանակական և որակական ցուցիչների բարելավման և լրամշակման անհրաժեշտությունը,
   - կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորման և վերլուծական հաշվետվողականության իրականացնումը ՌԾ-ին համապատասխան:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի և աջակցության հստակ մեխանիզմների կիրառմանը,
   - տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծման և դրանց կիրառմանը որոշումների կայացման գործընթացում,
   - քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
   - արտաքին կապերի զարգացմանը և գործատուների հետ համատեղ ռազմավարության մշակմանն ու իրագործմանը,
   - որակի ներքին ապահովման համակարգի կայուն զարգացման մեխանիզմների ստեղծմանն ու իրականացմանը,
   - ՄԿԾ-ների համապատասխանեցմանը տարածաշրջանի և աշխատաշուկայի կարիքներին,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2021 թ. հունիսի 2
ք.Երևան